ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2229-Ա « 05 » հունիսի 2025 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ
ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ
ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի կողմից 06.05.2025 թվականին հայտարարված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/159 ծածկագրով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար մանկական խաղահրապարակների կարուսելների և ճոճանակների ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած և համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած «Սոպրանո Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից) խախտել է գնման ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորությունները:

Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 41-րդ կետի պահանջները, 21.05.2025 թվականին մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել Մասնակցին հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում Մասնակցի կողմից չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները: Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 42-րդ կետով, Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Գնման ընթացակարգի շրջանակում չկայացած ընթացակարգի մասին հայտարարությունը 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով 26.05.2025 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «Սոպրանո Գրուպ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ